Հաստատում եմ՝

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սերգեյ Առաքելյան

« » _____ 2022թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Նելլի Նիկողոսի Հարությունյանի

«Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները (համեմատական-իրավական վերլուծություն)» ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է քրեական դատավարությունում քրեական գործերով իրավական օգնության, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում առկա հանձնման վերաբերյալ նորմերի վերլուծության և իրավակիրառ պրակտիկայում դրանց կիրառման որոշ հիմնախնդիրներին:

Ատենախոսը փորձել է մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը, ըստ էության, կհանդիսանա ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հայրենական իրավագիտության մեջ առաջին համապարփակ գիտական հետազոտությունը:

Ատենախոսական հետազոտության օբյեկտը քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման բնագավառում պետությունների համագործակցությունն է,

մասնավորապես՝ այդ բնագավառում միջազգային և ներպետական նորմերի ամբողջությունը: Հետազոտության առարկան քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ՝ հանձնման մասին միջազգային-իրավական փաստաթղթերով կանոնակարգվող պետությունների գործունեությունն է, որն ուղղված է հանցավորության դեմ պայքարում պայմանագրային պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության լավագույն հավասարակշռության կառուցակարգերի կատարելագործմանը:

Ուսումնասիրության նպատակը քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման տեսակների, դրանց ցուցաբերման իրավական հիմքերի և ընթացակարգերի վերլուծությունն է, ինչպես նաև կատարված վերլուծության հիման վրա իրավապահ մարմինների աշխատակիցների համար տեսական և գործնական բնույթի առաջարկությունների մշակումը:

Այդ նպատակին հասնելու համար սահմանվել են հետազոտման ենթակա խնդիրները՝ էքստրադիցիայի և քրեական գործերով իրավական օգնության դոկտրինալ հիմքերի ուսումնասիրությունը, քրեական գործերով իրավական օգնության և հանձնման հասկացության ձևակերպումը և դրա բովանդակության ներկայացումը, միջազգային դատական ատյանների (ՄԱԿ-ի միջազգային դատարան, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, մարդու իրավունքների միջամերիկյան դատարան և այլն), քվազիդատական մարմինների (Մարդու իրավունքների կոմիտեի, Խոշտանգումների դեմ կոմիտեի), ինչպես նաև ազգային դատական մարմինների ՀՀ, ՌԴ, Բելգիա, Գերմանիա, Նիդեռլանդներ, ԱՄՆ, Ֆրանսիա, Շվեյցարիա և այլ երկրների պրակտիկայի համալիր վերլուծությունը, էքստրադիցիայի իրավական կարգավորման առանձնահատկությունների վերհանումը հիմնարար կանոնների, կրկնակի հանցավորության, հատուկ կանոնի և այլ սկզբունքների ռեգյուլատիվ գործողության հաշվակցմամբ, էքստրադիցիոն պրակտիկայում «քաղաքական հանցագործությունների» բացառման հայեցակարգի ուսումնասիրությունը, միջազգային իրավունքում դրա փոխկապակցվածությունը և փոխգործակցությունը փախստա-

կանի կարգավիճակի հետ, էքստրադիցիայի փոխկապվածությունը քրեական ենթադատության տարբեր տեսակների, ներառյալ ունիվերսալ ենթադատության հետ, հանցավորության դեմ պայքարում հանրային-իրավական շահերի և էքստրադիցիոն գործընթացքում իրավապաշտպան գործոնի ապահովման անհրաժեշտության միջև օպտիմալ հավասարակշռության սահմանման մարտավարության հիմնավորումը, ոլորտը կարգավորող ՄԱԿ-ի, ԵՄ և ԱՊՀ մասնակից-պետությունների գործող միջազգային-իրավական փաստաթղթերի և քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման տեսանկյունից դրանց կիրառման պրակտիկայի ընդհանրացումը և վերլուծությունը, քրեական գործերով իրավական օգնության տեսակների նշանակության և բնութագրող հատկանիշների վերհանումը, քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության կազմակերպաիրավական մեխանիզմի հիմնավորումը, հանցավորության դեմ պայքարում համագործակցության «հորիզոնական» և «ուղղահայաց» մոդելների վերլուծությունը, էքստրադիցիայի եվրոպական մեխանիզմի բարեփոխումների զարգացման միտումների վերհանումը, քրեաիրավական հարցերով միջազգային համագործակցության նոր իրավաբանական գործիքի՝ եվրոպական կալանքի թույլտվության վերլուծությունը, քրեական գործերով իրավական օգնության կատարելագործմանն ուղղված պրակտիկայից բխող առաջարկությունների մշակումը և ներկայացումը:

Ընտրված հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ հանցագործություններն ընդհանրապես, իսկ անդրսահմանային հանցագործությունները հատկապես, այսօր հավասարապես վտանգավոր են ինչպես այն երկրների համար, որոնց տարածքում անմիջականորեն կատարվում են, այնպես էլ մյուսների համար: Նշված վտանգի չեզոքացման գործիքակազմում «inter alia», անշուշտ, իր կարևոր տեղն ունի պատժի անխուսափելիության սկզբունքի անվերապահ ապահովումը, այն է՝ հնարավորություն չտալ անձին մի պետության տարածքում հանցագործություն կատարելուց հետո պատասխանատվությունից խուսափելու նպատակով թաքնվել կամ պատսպարվել մեկ այլ պետության տարածքում: Միջազ-

գայնացման արդյունքում հանցավորությունը ձեռք է բերել անդրսահմանային բնույթ. հանցավորության հիմնախնդիրը հավասարապես վտանգավոր է միջազգային համակարգի բոլոր կարևոր դերակատարների համար, իսկ դրա դեմ պայքարը չի կարող լուծվել առանձին վերցրած պետության ներազգային սահմանափակ միջոցներով և մեթոդներով: Ինչպես վկայում է միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ առանց միջազգային հանրության հավաքական ջանքերի համախմբման, առանց պետությունների համագործակցության, հանցավորության դեմ պայքարն այսօր կդատապարտվի պարտության: Ասվածից դժվար չէ եզրակացնել, որ քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտն այլևս զուտ որևէ պետության ներքին գործը չէ, այլ գտնվում է միջազգային և ներպետական իրավունքի եզրագծում: Հետևաբար այսօր հրամայական պահանջ է միավորել պետությունների ջանքերը հանցավորության բացասական հետևանքների դեմ պայքարի հարցում: Նկատի ունենալով, որ պետությունների միջև էքստրադիցայի հետ կապված պարտավորություններ ծագում են այն դեպքերում, երբ շահագրգիռ կողմերը միմյանց նկատմամբ ստանձնել են միջազգային պայմանագրային պարտավորություններ, շատ կարևոր է, որպեսզի մի կողմից խորացվի նման միջազգային պայմանագրային պարտավորությունների ստանձնման պրակտիկան, իսկ մյուս կողմից՝ էլ ավելի բարձրացվի նման պարտավորությունների կատարումից խուսափելու համար պատասխանատվությունը:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ, հեղինակի կողմից կատարված տեսական մոտեցումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում: Հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվել անդրադառնալ քրեական արդարադատություն իրականացնող միջազգային դատական մարմինների հիմնադրման, դատավարական գործունեության, պետությունների հետ փոխհարաբերությունների առանձնահատկություններին և առկա խնդիրներին:

Սահմանվել է «Հանձնման ինստիտուտ» իրավագիտական հասկացությունը: Բացահայտվել և հիմնավորվել են Միջազգային քրեական դատարանի իրավազորության իրականացման առանձնահատկությունները և ՄԱԿ-ի կանոնադրության համապատասխան դրույթների բովանդակության հետ դրանց համապատասխանությունը: Քննարկման առարկա են դարձել նաև Վերսալի և Սևրի պայմանագրերի որոշակի դրույթներ՝ դրանցով նախատեսված դատական մարմինների ստեղծման և այդ մարմինների իրավազորության սահմանման մասով:

Ատենախոսության հեղինակը մանրամասն հետազոտել է քրեական գործերով իրավական օգնության և հանցագործություն կատարած, հանձնման ենթակա անձանց հանձնելու կամ հանցանք կատարած ՀՀ քաղաքացիներին պահանջելու որոշ իրավադրույթների և պրակտիկայում դրանց կիրառելիությունը: Անդրադարձ է կատարվել նաև այդ գործընթացում առաջացող խնդիրներին, առաջարկվել որոշ լուծումներ, որոնք բխում են ներպետական օրենսդրությունից և ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերից: Մեջբերվել են նաև ՄԻԵԴ վերաբերելի որոշումներ և դրանց կատարվել են հղումներ:

Արդյունքում, կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել օրենսդրական առաջարկներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 7 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկից:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տալիս հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշած խնդիրները: Աշխատանքը գրված է գրագետ, իրավաբանական լեզվով:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինա-

կի հրատարակած թվով ինը հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Այսպիսով, ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտի և առարկայի ճշտությունը, նպատակները, տեսական և գործնական խնդիրների առաջարկվող լուծումները, ինչպես նաև հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը կասկած չեն հարուցում:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Ատենախոսության «Քրեական գործերով իրավական օգնության՝ ներառյալ հանձնման վերաբերյալ միջազգային-իրավական համագործակցության զարգացումը և դրա սոցիալական-իրավական նախադրյալները» վերտառությամբ 3-րդ գլխի «Քրեական գործերով իրավական օգնության՝ ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը» վերտառությամբ 3.1 պարագրաֆում անդրադարձ է կատարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.1-րդ՝ «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ձերբակալման կարգը» վերտառությամբ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալելու դեպքում ձերբակալումն իրականացրած մարմինն անհապաղ տեղեկացնում է հետախուզման նախաձեռնողին՝ պահանջելով տվյալ պետության իրավասու մարմնի կողմից կայացված՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը կամ դատավճիռը»:

Այդ հոդվածի վերլուծության արդյունքում հարց է առաջանում, թե գործող օրենսդրության պայմաններում, օրենսդրական կարգավորման նմանատիպ դեպքերում ինչ դատավարական փաստաթղթի հիման վրա են հետաքննության մարմինները ՀՀ-ում ձերբակալում անձանց և արդյոք ճիշտ չի լինի մինչ ձերբակալելը համապատասխան միջնորդության հետ միասին օտարերկրյա պետությունը կամ նա-

խնդրեռնողը ներկայացնեն նաև որպես մեղադրյալ ներգրավելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշումները, որոնք հետագայում իրավական-փաստաթղթային հիմք կհանդիսանան հետաքննության մարմինների օրինական գործունեության համար: Հակառակ պարագայում ստացվում է, որ ՀՀ հետաքննության մարմինները օտարերկրյա պետության միայն միջնորդության կամ լավագույն դեպքում հետախուզում հայտարարելու մասին որոշման պատճենի հիման վրա, հանցանք կատարելու վերաբերյալ անմիջականորեն ծագած կասկածանքով, ձերբակալում են ենթադրյալ հետախուզվող անձին: Կարծում ենք՝ սա հակասում է գործող և նոր քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ձերբակալման հիմքերին և կարգին, և աշխատանքը էապես կշահեր, եթե դրա լուծման հնարավոր տարբերակ առաջարկվեր:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալելու դեպքում ձերբակալումն իրականացրած մարմինն անհապաղ տեղեկացնում է հետախուզման նախաձեռնողին՝ պահանջելով տվյալ պետության իրավասու մարմնի կողմից կայացված՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը կամ դատավճիռը:»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Անձի ձերբակալման մասին հաղորդումն անհրաժեշտ փաստաթղթերի հետ անհապաղ ուղարկվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն:»:

Միևնույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 475-րդ՝ «Իրավական օգնության հարցերով հաղորդակցություն իրականացնող մարմինները» վերտառությամբ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու հարցով հաղորդակցությունն իրականացվում է՝

1) մինչդատական վարույթում գտնվող գործերով դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ հարցումները կատարելու առնչությամբ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջոցով.

2) դատարանի վարույթում գտնվող գործերով դատավարական գործողություններ, այդ թվում՝ դատավճիռներ կատարելու վերաբերյալ հարցումները կատարելու առնչությամբ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով:

Վերոգրյալ հոդվածի վերլուծությունից անհասկանալի է, թե ինչու է անձի ձերբակալման մասին հաղորդումն ու փաստաթղթերը, այդ թվում նաև՝ դատավճիռների կատարման հետ կապված հարցերի դեպքում ուղարկվում միայն ՀՀ Գլխավոր դատախազություն, եթե, համաձայն նույն օրենքի, դատարանների վարույթում քննվող քրեական գործերով դատավարական գործողություններ, այդ թվում՝ դատավճիռներ կատարելու վերաբերյալ հարցումները կատարելու հաղորդակցվող մարմինը ՀՀ-ում հանդիսանում է Արդարադատության նախարարությունը: Կարծում ենք, որ այս հարցը, որին հեղինակն իր աշխատությունում բավարար չափով չի անդրադարձել, պրակտիկայում կարող է բերել անհարկի փաստաթղթաշրջանառության՝ դրանով իսկ ժամանակի կորստի, ինչու չէ որոշ դեպքերում նաև կարող է առաջացնել խնդիրներ կապված հաղորդակցություն իրականացնող լիազոր մարմնի կողմից անհրաժեշտ տեղեկատվությանը չտիրապետելու հետևանքով գործընթացի պատշաճ վերահսկողության բացակայության:

3. Աշխատության հեղինակը բավարար ուշադրության և վերլուծության չի արժանացրել այլ պետություններում դատապարտված և պատիժը կրող մեր քաղաքացիներին ՀՀ-ում դատավճռի կատարումն իրականացնելու օրենսդրական և պրակտիկ խնդիրներին ու առաջարկություն չի արել այդ խնդիրների լուծման համար, հատկապես այն պայմաններում, երբ իրավակիրառ պրակտիկայում իրավահարաբերությունների կողմ համարվող ՀՀ արդարադատության նախարարությունը գրեթե միշտ մերժում է, կամ ամեն դեպքում բարդեցված ընթացակարգով ու ոչ բավարար

համառությամբ է քննարկում այլ պետություններում հանցագործություն կատարելու համար քրեական պատասխանատվության ենթարկված ՀՀ քաղաքացիներին ՀՀ տեղափոխելու և պատիժը կրելու գործընթացը ու շատ դեպքերում չափազանցված պահանջներով անհիմն վիժեցնում է գործընթացը:

4. Ատենախոսության «Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ միջազգային պայմանագրային և ինստիտուցիոնալ համագործակցության առանձնահատկություններն անկախ պետությունների համագործակցության մասնակից-պետությունների շրջանակում» 2-րդ գլխի «2.1 Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման հարցերով միջազգային պայմանագրային համագործակցության առանձնահատկությունները» վերտառությամբ պարագրաֆի եզրափակիչ մասում հեղինակը նշում է, որ հանձնման ինստիտուտը պահանջում է որոշակի ֆինանսական և նյութական միջոցների օգտագործում, ուստի դատական խնայողության և հանձնման գործընթացի արագացման նկատառումներով, առանց կանխորոշելու դատական վերանայման վերջնական ընթացքը, պետությունները պետք է ձգտեն հստակեցնել բողոքարկման ընթացակարգերը՝ բացառելով դրանց կրկնողության և հաճախակիության հնարավորությունը: Իրավակիրառ պրակտիկայում պետությունների կարողությունը արագ և արդյունավետ համագործակցության անչափ էական է: Այս առումով կարծում ենք՝ իրավասու անձանց կոնտակտների, հանձնման միջնորդությունների և պատասխանների փոխանցման համար անհրաժեշտ է ավելի շատ օգտագործել հեռահաղորդակցության ժամանակակից միջոցները: Իսկ հարցումն ուղարկած և հարցումը ստացած պետությունները պետք է սահմանեն հաղորդակցության միջոցների լեգալիզացման նոր միջոցներ: Աշխատանքն էապես կշահեր, եթե հստակ առաջարկվեր հարցումն ուղարկած և հարցումը ստացած պետությունների հաղորդակցության միջոցների լեգալիզացման կոնկրետ միջոցներ:

Պետք է նշել, սակայն, որ նշված նկատառումները կրում են մասնավոր և խորհրդատվական բնույթ, չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենա-

խոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևաբար, Նելլի Նիկողոսի Հարությունյանի «Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները (համեմատական-իրավական վերլուծություն)» թեմայով ատենախոսական հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Նելլի Նիկողոսի Հարությունյանի «Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները (համեմատական-իրավական վերլուծություն)» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ:

Ատենախոսությունը քննարկվել ու 2022 թվականի փետրվարի 28-ից մարտի 3-ը դրվել է գրավոր քվեարկության Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդում և արժանացել գիտական խորհրդի անդամների դրական եզրակացությանը: Ատենախոսության քննարկմանը մասնակցել են՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Առաքելյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Գաբուզյանը, իրավաբանական գիտությունների դոկ-

տոր, պրոֆեսոր Վահե Հովհաննիսյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Նիկողոսյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Սերգեյ Մարաբյանը, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Արտաշես Խուրշուդյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Արշալույս Մինասյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գևորգ Իսրայելյանը:

Արդարադատության ակադեմիայի
գիտական խորհրդի քարտուղարի պարտականությունները կատարող,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գևորգ Իսրայելյան